ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Օրգանիքս ՍՊԸ-ն ԱԱԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-26/17 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի		
	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	TP-100, nXDS10i, GH-1000	Tergeo, Edwards, Shenfen	Պլազմային մաքրող սարք Նախատեսված է նմուշների մաքրման, էնկապսուլացման, մակերեսների մշակման, հիդրոֆիլության բարձրացման, ապակիների և այլ կերամիկաների մակերեսների ակտիվացման, կոմպոզիտային նյութերի եռակցման և այլ նպատակների համար: Պլազմայի աղբյուրի տեսակ՝ տևական և պուլսային, 1%-ից մինչև 100% կարգավորման հնարավորությամբ, քայլը 1%, ընդ որում կարգավորման այս ֆունկցիան երկու ռեժիմներում էլ պետք է հնարավոր լինի: Սարքը պետք է ունենա 7 դույմ գունավոր սենսորային էկրան, ծրագրային կառավարման հնարավորություն՝ ավտոմատ նախածրագրավորված և օգտագործողի կողմից 20 ներմուծվող և փոփոխության ենթական ծրագրեր: Ծրագրերի հաջորդական իրականացումը պետք է հնարավոր լինի իրականացնել ավտոմատ կերպով: Սարքը պետք է հագեցած լինի հետևյալ տվիչներով (սենսոր)՝ ջերմաստիճան, ճնշում, 2 գազի ծախսի չափիչ, գեներացված պլազմայի հզորության չափման երկու սենսորներ: Նմուշների մշակման երկու ռեժիմների առկայություն՝ ուղղակի և հեռահար, որոնց համար սարքը

			հագեցած է երկու տարբեր պլազմայի գեներացման աղբյուրներով: Ուղղակի մաքրման ռեժիմը արագ նմուշների արագ մշակման կամ փոփոխման համար է, իսկ հեռահար ռեժիմը զգայուն մակերեսների մաքրման համար է: Ռեժիմների կարգավիճակը և կիրառվող պլազմայի ուժգնությունը օնլայն ռեժիմով պետք է հնարավոր լինի տեսնել սարքավորման էկրանին: Սարքավորման խցիկը պետք է լինի գլանաձև, բավական մեծ նմուշների համար պիտանի, տրամագիծը 160 մմ սահմաններում, երկարությունը 280 մմ սահմաններում: Խցիկի նյութը պետք է պատրաստված լինի 5 մմ հաստությամբ գերմաքուր և հարթ կվարցե ապակուց և ունենա մետաղական եզր, պետք է կայուն լինի ալկալիների և թթուների հանդեպ: Խցիկի ներսում պետք է լինի նմուշի հարթակ 150 մմ լայնությամբ և 220 մմ երկարությամբ, պատրաստված 2 մմ հաստությամբ կվարցե ապակուց: Սարքավորման բարձր հաճախականություն գեներատորները պետք է լինեն արտաքին, ոչ թե խցիկի ներսում: Գեներատորների հզորությունը՝ 150 վտ, 1 վտ քայլով կարգավորման հնարավորությամբ: Սարքը պետք է հագեցած լինի 2 հավելյալ սարք կցելու մուտքերով, որոնցից մեկը նախատեսված վակուումային պոմպի համար: Սարքավորումը պետք է ունենա հետևյալ որակի համապատասխանության և անվտանգության սերտիֆիկատները՝ UL, IEC, CSA, NRTL. Չոր գալարային պոմպ: վակումի հզորություն 12.7 մ3/ժ-1, 0,007 մբար խորությամբ վակումի ապահովում: Շարժիչի հզորություն՝ 270-300 վտ, 200-240 Վ, 50/60 հց: Արագության կարգավորումը հզորության 1% քայլի չափով: Պոմպի կառավարման բլոկը պետք է հագեցած լինի հոսսանքի աղբյուրի մուտքային պորտով, միացման և անջատման հպումային կոճակներով, ավտոմատ և օգտագործողի պարամետրերով աշխատելու ստեղներից, USB մուտքով, հեռակառավարման բլոկին միացնելու պորտով: Սարքն պետք է ունենա սխալների լուսաձայնային ազդանշաններ արձակելու հնարավորութուն: Աշխատանքային ռեժիմում սարքի աղմուկը 50 դբ: Ջրածնի գեներատոր: Նախատեսված է գերմաքուր չոր գազային ջրածնի ստացման համար:

			Տեխնիկական պարամետրերն են. Գեներացված գազի մաքրություն 99,99%: Գեներացված գազի արտադրողականություն 1000 մլ / րոպե: Գեներացված գազի ելքային ճնշում 6 մթն.: Սարքի սնուցումը 220 վոլտ/ 50Հց, 300 վտ: Սարքի արտաքին չափսեր 60*30*45 սմ: Սարքը կառավարվում է ծրագրավորվող թվային համակարգով, հագեցած է մի շարք անվտանգային համակարգերով, ինչպես նաև մուտքային/ելքային գազերի ցուցիչներով: Աշխատանքային ռեժիմում սարքի աղմուկը 50 դբ: Լրակազմում պետք է առկա լինի նաև գազերի խառման կայանք, որը թույլ կտա ստանալ ներտ գազի և ջրածնի խառնուրդ սկսած 5 % / 95 % գազային խառնուրդից մինչև 50 % / 50 % խառնուրդ: Երաշխիք՝ 2 տարվա գործարանային երաշխիք: Մատակարարը պարտավոր է իրականացնել տեղադրում, մեկնարկ և լրակազմի շահագործման լիակատար ուսուցում:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Органикс ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԱԱԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-26/17 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар		
	марка	наименование производителя	технические характеристики
1			